



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ք.Երևան, Զաքիյան 2

info@advocates.am

Կ Ա Ր Ծ Ի Ք

ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված Հմայակ Խալաֆյանի, Անահիտ Վարդանյանի, Վարդան Խալաֆյանի, Անի Խալաֆյանի և Արտակ Զեյնալյանի անհատական դիմումի վերաբերյալ

ք.Երևան

17.03.2016թ.

Քաղաքացիներ Հմայակ Խալաֆյանը, Անահիտ Վարդանյանը, Վարդան Խալաֆյանը, Անի Խալաֆյանը (ներկայացուցիչներ՝ Տիգրան Սաֆարյան, Արտակ Զեյնալյան) (այսուհետ՝ Դիմող) և Արտակ Զեյնալյանը 2015 թվականի նոյեմբերի 16-ի դիմումով ՀՀ սահմանադրական դատարանից խնդրել են որոշել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ընդունվել է 17.06.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՕ-247)¹ 40-րդ հոդվածի 1-ին մասի՝ «բացառությամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի» դրույթի և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 14.12.2004թ., ուժի մեջ է մտել 22.01.2005թ., ՀՕ-29-Ն)² 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 18, 19, 20, 14.1. և 1-ին, 23, 27.1., 8, 31, 3-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը 2015թ. դեկտեմբերի 7-ի՝ անհատական դիմումի ընդունելիության հարցի վերաբերյալ թիվ ՍԴԴԿՈ/2-22 որոշմամբ դիմողներ Հմայակ Խալաֆյանի, Անահիտ Վարդանյանի, Վարդան Խալաֆյանի, Անի Խալաֆյանի մասով անհատական դիմումն ընդունել է

¹ Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53):

² Տե՛ս ՀՀՊՏ 2005.01.21/6(378):

քննության և նիստ նշանակել 2016 թվականի մարտի 29-ին, իսկ դիմող Արտակ Զեյնալյանի մասով մերժել է դիմումի ընդունումը՝ այն պատճառաբանությամբ, որ վերջինս դատարաններում չի հանդիսացել որպես դատավարության կողմ, չունի իր նկատմամբ կայացված վերջնական դատական ակտ, հետևաբար՝ օժտված չէ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավունքով:

Դիմող կողմի դիրքորոշումը հանգում է հետևյալին.

Դիմողը նախ մեջբերում է ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածների, ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի դրույթները՝ դրանց լույսի ներքո փորձելով մեկնաբանել իրավապաշտպան գործունեության բովանդակությունն իբրև դատական պաշտպանության իրավունքի երաշխիք և չափորոշիչ:

Դիմողը, մեջբերելով ՀՀ Սահմանադրության 1-ին, 23, 27.1-րդ հոդվածները, գտնում է, որ իրավապաշտպան գործունեությունը սահմանադրական արժեք է և իրավունք:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածները՝ Դիմողը նշում է, որ իրավապաշտպան գործունեությունը ձեռնարկատիրական գործունեություն է՝ անկախ դրա վճարովի կամ անվճար լինելու հանգամանքից, վճարովի լինելու պարագայում՝ անկախ դրա համար վճարման աղբյուրներից և վճարող անձի ով լինելուց:

Այսպիսով, Դիմողը գտնում է, որ վիճարկվող օրենսդրական դրույթները հակասում են վերը նշված սահմանադրական նորմերին, *«քանի որ արգելում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից իր ընտրած անձի միջոցով դատական ներկայացուցչություն իրականացնելու հնարավորությունը»:*

Դիմողը, մեջբերելով ՀՀ սահմանադրական դատարանի 08.10.2010թ. ՍԴՌ-765 որոշումը, փաստել է, որ օրենսդրությունը քաղաքացիական գործերով փաստաբանի ծառայությունից անվճար օգտվելու հնարավորություն չի երաշխավորում յուրաքանչյուրի համար:

Այնուհետև, Դիմողը անդրադարձել է այն իրավական հարցին, թե արդյոք իր ռեսուրսներով Հանրային պաշտպանի գրասենյակն ի վիճակի է ապահովել անվճար իրավաբանական օգնություն՝ այդպիսի օգնության կարիք ունեցող յուրաքանչյուր անձի համար: Կատարված ուսումնասիրությունների և վիճակագրական տվյալների հիման վրա Դիմողը հանգել է հետևության, որ Հանրային պաշտպանի գրասենյակն ունակ չէ միայնակ կրելու անվճար իրավաբանական ծառայություններ մատուցելու հանրային բեռը. վերջինիս ռեսուրսները մոտ 10 անգամ փոքր են պահանջարկից: Ըստ Դիմողի՝ փաստաբան-գործ-առաջարկ-պահանջարկի խզվածքն ահռելի է, ինչի

պարագայում ապահովված չէ անձանց արդար դատաքննության սահմանադրական իրավունքը:

Դիմողը պնդում է նաև, որ վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 14.1-րդ, Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածներին, քանի որ իրավաբանը, ով փաստաբան չէ, իրավունք ունի ներկայացուցչություն իրականացնել ՀՀ սահմանադրական դատարանում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, ՀՀ վարչական դատարանում, ՀՀ ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես տուժողի ներկայացուցիչ՝ քրեական գործերով, սակայն քաղաքացիական գործի շրջանակում չի կարող լինել ֆիզիկական կամ իրավաբանական անձի ներկայացուցիչը: Վիճարկվող իրավակարգավորումները, ըստ Դիմողի, հակասում են խտրականության արգելքի սահմանադրական սկզբունքին, քանի որ այդ կարգավորումներում կամ ընդհանրապես օրենսդրության մեջ համապատասխան դեպքերում սահմանված չեն փաստաբան հանդիսացող և փաստաբան չհանդիսացող անձանց տարբերակման նպատակը, համաչափությունը և ողջամիտ հիմնավորումը:

Ուստի, ելնելով վերոգրյալից՝ Դիմողը խնդրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի՝ «բացառությամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի» դրույթը և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18, 19, 20, 14.1. և 1-ին, 23, 27.1., 8, 31, 3-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Վիճարկվող դրույթների բովանդակությունը

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի վիճարկվող դրույթի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 40. Անձինք, որոնք կարող են ներկայացուցիչներ լինել դատարանում

1. Դատարանում ներկայացուցիչ կարող է լինել դատարանում գործը վարելու պատրաստ ձևակերպված լիազորություն ունեցող ցանկացած գործունակ քաղաքացի,

քաղաքացիական «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Ընդ որում, նշված քաղաքացիադատավարական դրույթը այդպիսի խմբագրությամբ է շարադրվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» 08.12.2011թ. ՀՀ օրենքով (տե՛ս ՀՕ-341-Ն, ՀՀՊՏ 2012.01.09/2(876) հոդ.8):

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի վիճարկվող դրույթի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 5. Փաստաբանական գործունեությունը

...

3. Սույն հոդվածով նախատեսված դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն կարող է իրականացնել միայն փաստաբանը, բացառությամբ՝

1) մերձավոր ազգականի, այդ թվում՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապի, տատի, թոռան, ինչպես նաև ամուսնու կամ ամուսնու ծնողի, փեսայի կամ հարսի համար անվճար ներկայացուցչություն իրականացնելու դեպքերի.

2) մերձավոր ազգականին (ազգականներին) կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանող իրավաբանական անձի շահերը դատարանում ներկայացնելու դեպքերի:

Նշված դրույթը այդպիսի բովանդակությամբ ընդունվել է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 08.12.2011թ. ՀՀ օրենքով (տե՛ս ՀՕ-339-Ն, ՀՀՊՏ 2012.01.09/2(876) Հոդ.6):

Վերը նշված օրենսդրական փոփոխությունների վերլուծությունից և դրանց կատարման հիմնավորումներից հետևում է, որ 08.12.2011թ. կատարված օրենսդրական փոփոխությունների՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների միջոցով ՀՀ օրենսդիրը, ինչպես կտեսնենք ստորև, նպատակ է

ունեցել վերանայելու և կատարելագործելու Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրականացման երաշխիքները, ընդլայնելու անվճար իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությունները և բարձրացնելու փաստաբանության դերը հասարակության մեջ՝ հիմք ընդունելով զարգացած երկրների փորձը և համընդհանուր ճանաչում ստացած չափանիշներն ու սկզբունքները:

Օրենսդրի նպատակը և քննարկվող օրենսդրական փոփոխությունների իմաստն ու նշանակությունը մանրամասն շարադրված է այդ փոփոխությունների հիմնավորումներում¹:

Այժմ քննարկման առարկա պետք է դարձնել այն հարցը, թե արդյո՞ք վերը շարադրված փոփոխությունները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ հատկապես սահմանադրական այն նորմերին, որոնք վկայակոչում է Դիմողը:

ա) Դատական պաշտպանության իրավունքի, արդար դատաքննության և արդարադատության մատչելիության իրավունքի բովանդակությունը (ՀՀ Սահմ, հոդվ. 61, 63²)

Անհատական սահմանադրական դիմումով վիճարկվող նորմերի սահմանադրականության հարցը պարզելու համար, կարծում ենք, նախ՝ անհրաժեշտ է դիտարկել ՀՀ Սահմանադրությամբ սահմանված դատական պաշտպանության իրավունքի, արդար դատաքննության և արդարադատության մատչելիության իրավունքի բովանդակությունը ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու

¹ Տե՛ս ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական վեբ կայքում հետևյալ հղմամբ <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=5145&Reading=0>, 13.03.2016թ.:

² Մինչև ՀՀ Սահմանադրության 2015թ. փոփոխությունները, նշված դրույթներն ամրագրված էին Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ **իրավական բավարար նախադրյալների ստեղծումն** ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, կարևորվել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար **արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը:**

Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է¹:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է **պետության պոզիտիվ պարտականությունը**՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, **օրենսդրի պարտականությունը**՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, **իրավակիրառողի պարտականությունը**՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:²

¹ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. հունվարի 16, ՍԴՈ-673, 8-րդ կետ:

² ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

«Սահմանադրության՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող 18-րդ հոդվածը «Սահմանադրական դատարանի դատական պրակտիկայում, որպես կանոն, վկայակոչվում է 19-րդ հոդվածի հետ սերտ միասնության մեջ՝ որպես իրենից մեկ միասնական իրավական երևույթ ներկայացնող: Դա, մասնավորապես վերաբերում է **արդարադատության մատչելիության իրավունքին**՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի, որի սահմանադրական ամրագրումը դիտարկվում է 18-րդ և 19-րդ հոդվածներում՝ միաժամանակ և միասնաբար՝ չկոնկրետացնելով դրա սահմանադրական-տեքստային հիմքը¹:

«Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված արդարադատության մատչելիության իրավունքի՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի հիմնարար սահմանադրական երաշխիքներն են՝ ա) դատական քննության հավասարություն և արդարացիություն, բ) անկախ և անկողմնակալ դատարան, գ) դատական քննության ողջամիտ ժամկետ և դ) հրապարակայնություն:

Արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջումներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների և դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն»²:

Եվրոպական դատարանը միաժամանակ գտնում է. «Բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետների կարգավորումը, անկասկած, նպատակ ունի ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը, հատկապես իրավական

¹ «Սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջեր 222-223:

² Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 may 1985, Garcia Manibardo v. Spain (15 feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 nov. 1995, Philis v. Greece, 27 aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 jun. 1995:

որոշակիության սկզբունքը: Շահագրգռված անձինք պետք է հաշվի առնեն, որ այդ կանոնները պետք է կիրառվեն»¹:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ **անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել** անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսպիսով, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով ամրագրված (2005թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներ) դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության էությունը անձի իրավունքների և ազատության պաշտպանության համար դատարան դիմելու, այդ թվում՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի սահմանումն է և այդ իրավունքի պատշաճ իրականացման համար պետության կողմից գործուն մեխանիզմների և մատչելի պայմանների ստեղծումն ու երաշխավորումը:

Ըստ Եվրոպական դատարանի դատական պրակտիկայի՝ դատաքննության և դրա մասնավոր տարրը հանդիսացող մատչելիության իրավունքը «բացարձակ իրավունք» չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, հայցի (բողոքի կամ դիմումի) ընդունելիության պայմանների առնչությամբ: Սակայն անձի դատական քննության իրավունքի մատչելիությունը և իրավունքների պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու համար պետությունը կաշկանդված է պատշաճ պայմաններ և մեխանիզմներ մշակելու և երաշխավորելու պարտականությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ «իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին ատյանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության: Օրենքին չհամապատասխանող դիմումները վարույթ չեն

¹ Perez de Rada Cavanilles v. Spain, 28 oct. 1998, Societe anonyme "Sotiris et Nikos Kouras ATTEE" v. Greece (16 nov. 2000), 16 feb. 2001:

ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շտկվում են, ապա կարող են վերստին ներկայացվել: Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն:

Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ: Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով, ապահովելու և երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը¹:

«Հ սահմանադրական դատարանն իր 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշման մեջ, մասնավորապես արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի ընդհանուր բովանդակությունից հետևում է.

...գ) ընթացիկ օրենսդրության խնդիրն է նյութական և ընթացակարգային նորմերի միջոցով սահմանել ու մանրամասնել ինչպես ՀՀ վճարելի դատարանի սահմանադրական կարգավիճակից բխող, այնպես էլ ընդհանուր իրավասության և մասնագիտացված ստորադաս դատարանների լիազորությունների շրջանակը, իրականացման կարգն ու պայմանները...» (ընդգծումը մերն է՝ ՀՀ փաստաբանների պալատ):

* * *

Դատական պաշտպանության իրավունքի, արդար դատաքննության և արդարադատության մատչելիության իրավունքի վերը նկարագրված բովանդակությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասով և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն միայն փաստաբանին իրավազորելը բխում է **նյութական և ընթացակարգային նորմերի միջոցով դատարանների կողմից իրենց լիազորությունների իրականացման կարգն ու պայմանները սահմանելու, անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծելու, դատարան դիմելու իրավունքի երաշխավորման և պետության կողմից այդ իրավունքի իրացման**

¹ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

համար արդյունավետ միջոցներ և պայմաններ ստեղծելու պետության պոզիտիվ պարտականությունից:

Այլ կերպ ասած, պետությունը, նախատեսելով քաղաքացիական գործերով դատական ներկայացուցչության իրականացման ձևով իրավաբանական օգնություն ստանալու¹ հնարավորությունը միայն փաստաբանի միջոցով և սահմանափակելով այլ անձանց (ոչ փաստաբանների) կողմից դատական ներկայացուցչության իրականացման հնարավորությունը, նպատակադրված է ապահովելու և երաշխավորելու անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի պատշաճ իրացումը:

Ընդ որում, հարկ է նկատել, որ քաղաքացիական գործերով դատական ներկայացուցչության իրականացման հնարավորության սահմանափակումը օրենսդրի կողմից միայն փաստաբանի միջոցով բացարձակ չէ:

Այսպես, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

3. Սույն հոդվածով նախատեսված դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն կարող է իրականացնել միայն փաստաբանը, բացառությամբ՝

1) մերձավոր ազգականի, այդ թվում՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապի, տատի, թոռան, ինչպես նաև ամուսնու կամ ամուսնու ծնողի, փեսայի կամ հարսի համար անվճար ներկայացուցչություն իրականացնելու դեպքերի.

2) մերձավոր ազգականին (ազգականներին) կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանող իրավաբանական անձի շահերը դատարանում ներկայացնելու դեպքերի:

Նշված հոդվածից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է բացառություններ փաստաբանի միջոցով դատական ներկայացուցչության իրականացման հնարավորության հարցում:

Մասնավորապես, դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը այլ անձի (ոչ փաստաբանի) կողմից թույլատրվում է, եթե այն՝

ա) պարբերաբար մատուցվող ծառայություն չէ, կամ

բ) վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն չէ, կամ

գ) ուղղված է մերձավոր ազգականի համար անվճար ներկայացուցչություն իրականացնելուն, կամ

¹ Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի մասին մանրամասն կխոսվի ստորև:

դ) ուղղված է մերձավոր ազգականին (ազգականներին) կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանող իրավաբանական անձի շահերը դատարանում ներկայացնելուն:

Նշված բացառությունների սահմանումը պետության կողմից նպատակ ունի թույլատրել քաղաքացուն բացառիկ՝ օրենքով նախատեսված վերը նշված դեպքերում օգտվել այլ անձի ծառայություններից և պարտադրված չլինել անպայման դիմելու փաստաբանի օգնությանը՝ դրանով իսկ ապահովելով դատական ներկայացուցչության ձևով իրավաբանական օգնություն ստանալու ազատությունը և միաժամանակ սահմանափակելով դատական ներկայացուցչություն իրականացնող անձի կողմից այդ գործունեությունը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով իրականացնելու հնարավորությունը: Ընդ որում, նույնպիսի իրավական կարգավորումներ են գործում նաև բազմաթիվ զարգացած եվրոպական երկրներում, որոնց մասին կխոսվի **սույն կարծիքի «դ» կետում**:

Նույն համատեքստում հարկ է կրկին անդրադառնալ ՀՀ սահմանադրական դատարանի 08.10.2008թ. ՍԴՈ-765 որոշմանը, որը վկայակոչելով, Դիմողը փաստում է, որ օրենսդրությունը քաղաքացիական գործերով փաստաբանի ծառայությունից անվճար օգտվելու հնարավորություն չի երաշխավորում յուրաքանչյուրի համար:

Ինչպես հայտնի է, ՀՀ սահմանադրական դատարանը 08.10.2008թ. ՍԴՈ-765 որոշմամբ հակասահմանադրական է ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածը, որն ընդհանրապես բացառում էր անձի հնարավորությունը դիմելու վճռաբեկ դատարան առանց փաստաբանի: Մասնավորապես, ըստ նշված քաղաքացիադատավարական նորմի՝ գործին մասնակցող ֆիզիկական և իրավաբանական անձինք վճռաբեկ բողոք կարող են ներկայացնել միայն փաստաբանի միջոցով. քաղաքացին իրավունք չունի նույնիսկ անձամբ դիմելու վճռաբեկ դատարան:

Նշված նորմը ճանաչելով հակասահմանադրական՝ իր վերը նշված որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանը ամրագրել է, որ *փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու ինստիտուտը՝ որպես այլընտրանքային տարբերակ, իրավաչափ կարող է համարվել միայն այն դեպքում, երբ օրենսդրությունը փաստաբանի ծառայությունից օգտվելու հնարավորությունը երաշխավորի յուրաքանչյուրի համար՝ անկախ տվյալ անձի ֆինանսական հնարավորություններից:*

Այսինքն, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ հակասահմանադրական ճանաչված 223-րդ հոդվածի 3-րդ մասի և նույն օրենսգրքի 40-րդ հոդվածի **համեմատությունը արդարացի չէ**, քանի որ **առաջին դեպքում**, ինչպես արդեն նշեցինք, խոսքը վերաբերում է միայն փաստաբանի միջոցով

վճարել դատարան դիմելու իրավունքին՝ սահմանափակելով քաղաքացու իրավունքը նույնիսկ **անձամբ** դիմելու դատարան (ՀՀ քաղ. դատ. օր. հոդվ. 223, մաս 3), իսկ **երկրորդ դեպքում՝** խոսքը գնում է քաղաքացիական դատարանում դատական ներկայացուցչության ձևով միայն փաստաբանի իրավաբանական օգնությունից օգտվելու իրավունքի մասին՝ առանց սահմանափակելու քաղաքացու՝ անձամբ դատարան դիմելու և անձամբ դատարանում պաշտպանվելու իրավունքը:

Հետևաբար, այն, որ «օրենսդրությունը փաստաբանի ծառայությունից օգտվելու հնարավորությունը չի երաշխավորում յուրաքանչյուրի համար՝ անկախ տվյալ անձի ֆինանսական հնարավորություններից», չի նշանակում, որ խախտվում է անձի դատական պաշտպանության իրավունքը և որ դա հակասում է ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշմանը, մի պարզ պատճառով, քանի որ օրենսդրորեն անձին հնարավորություն է տրված իր խախտված իրավունքների վերականգնման համար անձամբ դիմելու դատական պաշտպանության:

Այսպիսով, վիճարկվող դրույթները չեն հակասում Սահմանադրությամբ սահմանված դատական պաշտպանության արդյունավետ միջոցների, արդար դատաքննության և արդարադատության մատչելիության իրավունքը նախատեսող սահմանադրաիրավական նորմերին:

բ) Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը (ՀՀ Սահմ, հոդվ. 64¹)

Սահմանադրության (27.11.2005թ. փոփոխություններով) 20-րդ հոդվածի համաձայն՝ *Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:*

Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. *Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:*

Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը բավականին մանրամասն մեկնաբանված է իրավաբանական գրականության մեջ, մասնավորապես՝ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի խմբագրությամբ հրատարակված «Հայաստանի Հանրապետության սահմանադրության մեկնաբանություններ»-ում:

Ըստ նշված աղբյուրի՝ քննարկվող դրույթը նպատակ ունի բոլոր մարդկանց

¹ Մինչև ՀՀ Սահմանադրության 2015թ. փոփոխությունները, նշված դրույթն ամրագրված էր Սահմանադրության 20-րդ հոդվածում:

համար հասանելի դարձնել իրավաբանական ծառայությունները, որոնք պետք է տրամադրվեն անկախ խորագիտակ իրավաբանների կողմից:

Անձի իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությունը որևէ կերպ սահմանափակված չէ: Իրավաբանական օգնություն կարող է ստանալ ցանկացած անձ, ցանկացած հարցի կապակցությամբ՝ անկախ նրա կարգավիճակից, գործունեության ոլորտից, իրավահարաբերության բնույթից, պետական գործունեության տեսակից, ընթացակարգի առանձնահատկություններից և այլն: Պետությունը պարտավոր է ապահովել **արդյունավետ ընթացակարգեր և ճկուն կառուցակարգեր**, որոնք յուրաքանչյուրի համար կապահովեն իրավաբանական օգնության արդյունավետ և հավասար հասանելիությունը՝ անկախ որևէ հանգամանքից¹:

«Սահմանադրական դատարանը 08.10.2008թ. ՍԴՈ-765 որոշման 14-րդ կետում հստակ ընդգծել է. «...«Սահմանադրության 20 հոդվածի 1-ին մասի ընկալմամբ՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է, նախ՝ **որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու հնարավորությունը**, երկրորդ՝ **պետության պարտավորությունը՝ որակյալ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն ապահովելու բոլոր նրանց համար**, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն ստանալ այդպիսի օգնություն: Պետության նշված պարտավորությունը ենթադրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտ է փաստաբանի պարտադիր ներկայացուցչություն կամ այն բխում է դատավարության շահերից, յուրաքանչյուր կարիքավոր պետք է իրավունք ունենա ստանալու իրավաբանական որակյալ օգնություն: Դա բխում է արդարադատության իրականացման բնագավառում իրավաբանական ծառայության մատուցման եվրոպական փորձից, ինչպես նաև իրավաբանների և իրավաբանական ծառայության մատչելիության վերաբերյալ ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված սկզբունքներից»: (ընդգծումը մերն է՝ ՓՊ):

Այսինքն՝ Սահմանադրության 20-րդ հոդվածով, համաձայն «Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման, ամրագրվել է պետության պոզիտիվ պարտականությունը գործուն ընթացակարգեր, երաշխիքներ և մեխանիզմներ սահմանելու անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացումն ապահովելու համար, և որ այդ օգնությունը պետք է լինի **որակյալ**:

Ավելին, 2015թ. «Փոփոխված Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով, փաստորեն, պետությունը իր՝ անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման պոզիտիվ պարտականության ապահովումը դիտարկում է

¹ «Սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջ 237:

բացառապես փաստաբանության գործունեության միջոցով:

Սահմանադրական նշված նորմի համաձայն՝ Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

Ուստիև, պետությունը պարտավորված չէ ընդունելու և կիրառելու այնպիսի օրենսդրական կարգավորումներ, որոնցով երաշխավորված կլինի անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ոչ փաստաբանի միջոցով:

Սահմանադրության նշված դրույթն ինքնանպատակ չէ. անձի իրավաբանական օգնություն ստանալու օբյեկտիվ պահանջն անհրաժեշտություն է դարձնում ոչ միայն նշված իրավունքի ամրագրումը, այլև դրա իրականացման երաշխիքների սահմանումը: Սահմանադրությամբ երաշխավորվող այս իրավունքի էությունից և բնույթից բխում է, որ **այն պետք է բավարարի համընդհանուր ճանաչում ստացած չափանիշները**, քանզի պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մաս): **Սա նշանակում է, որ երաշխավորվող իրավաբանական օգնությունը պետք է լինի որակյալ**, այսինքն՝ տրամադրվի բարձր որակավորում ունեցող մասնագետի կողմից և ապահովվի անձի իրավունքների և օրինական շահերի պատշաճ պաշտպանությունը կամ խախտված իրավունքների վերականգնումը համապատասխան ոլորտում: Իրավաբանական օգնության որակյալ լինելն ընդգծում է պետության կողմից երաշխավորվող իրավունքի նշանակությունը: Անձին որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալը կարևորվում է այն հանգամանքով, որ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրականացումը ու դրանց իրական պաշտպանությունն ամբողջ ծավալով հնարավոր է միայն այն դեպքում, երբ արվում է օրենքների հստակ իմացությամբ և դրանց պահանջներին համապատասխան¹:

Հետևաբար, այս իրավունքը չի կարող իրականացվել ամեն մի անձի կողմից: Դրա համար անհրաժեշտ է ոչ միայն օրենքները և այլ իրավական ակտերը կարդալու ունակություն, **այլև դրանք ճիշտ հասկանալու ու մեկնաբանելու հմտություն**: Որոշակի հարցի լուծման համար անհրաժեշտ իրավական ակտի արագ հայտնաբերումը, դրա կիրառման ոլորտը որոշելը, իրավապահ և այլ մարմիններում գործեր վարելը պահանջում են իրավական կարգավորման հարցերում

¹ ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջեր 238-239:

կողմնորոշվելու հատուկ գիտելիքների առկայություն: Այլ կերպ ասած՝ դրա համար անհրաժեշտ է, որ իրավաբանական օգնությունը ցույց տրվի ձեռնհաս անձի՝ մասնագետի կողմից: **Որպես այդպիսին Հայաստանի Հանրապետությունում հանդես են գալիս այդ նպատակով հատուկ ստեղծված կառույցի (փաստաբանության) ներկայացուցիչները՝ փաստաբանները: Դա է պատճառը, որ, փաստորեն, անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, պետությունը Սահմանադրության ուժով կապում է փաստաբանական գործունեության հետ:**

Իհարկե, դա չի նշանակում, որ փաստաբաններից բացի այլ անձինք չեն կարող իրավաբանական օգնություն ցույց տալ: Սակայն, քանի որ պետությունը երաշխավորում է իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը և պատասխանատու է դրա **պատշաճ որակի համար**, ապա պարտավոր է ապահովել որակյալ, անհրաժեշտ մասնագիտական հմտությունների ունեցող իրավաբանների պատրաստման պայմանները, ինչպես նաև սահմանել փաստաբաններին ներկայացվող մասնագիտական և բարոյական պահանջներն ու չափանիշները: Նման կառուցակարգերի միջոցով պետությունն իրացնում է ոչ միայն մարդու իրավունքների իրականացումն ապահովող երաշխիքների ամրագրման իր առաջնակարգ գործառույթը, այլև ընդգծում է համապատասխան նպատակի նվաճման գործում իր պատասխանատվությունը¹:

«Քաղաքացիական դատավարության օրենսգրքում և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում 2011թ. վերը շարադրված օրենսդրական փոփոխություններն էլ, փաստորեն, առաջին հերթին որակյալ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությունը նախատեսող այն իրավական հիմքերն ու նախադրյալներն էին, որոնցով պետությունը կատարում էր իր պոզիտիվ պարտականությունը ապահովելու քննարկվող հիմնական սահմանադրական իրավունքի իրացման երաշխիքները: Ընդ որում, այդ իրավական նախադրյալների հիման վրա ձեռնարկվել և ձեռնարկվում են նաև կազմակերպական, տնտեսական, քաղաքական, սոցիալական և բազմաթիվ այլ միջոցառումներ անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի գործնական ապահովման համար:

Այդ միջոցառումներից է **ՀՀ փաստաբանների պալատի ներկառուցվածքային փոփոխությունները, ՀՀ փաստաբանների պալատի նյութատեխնիկական վերազինումը, փաստաբանների որակավորման և վերապատրաստման գործընթացների կատարելագործումը, ՀՀ փաստաբանական դպրոցի հիմնումը, Հանրային պաշտպանի գրասենյակի զարգացումը, հանրային պաշտպանների թվի ավելացումը, Հանրային պաշտպանի գրասենյակի նյութատեխնիկական**

¹ Տե՛ս նույն տեղում:

ապահովումը, անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց և դեպքերի ընդլայնումը և այլն:

Ասվածը նշանակում է, որ պետությունը կաշկանդված լինելով իրավաբանական օգնություն ստանալու անձի հիմնական սահմանադրական իրավունքով, գործուն քայլեր է ձեռնարկել և ձեռնարկում անձի նշված հիմնական իրավունքի երաշխավորման և պաշտպանության համար՝ կատարելով իր պոզիտիվ պարտականությունը:

Դատարանում միայն փաստաբան հանդիսացող ներկայացուցչի ոչ պարտադիրություն նախատեսելը կազմաբանո է անում պետության նպատակամղվածությունը, գործադրված ջանքերն ու ներդրված ռեսուրսները իրավաբանական օգնության որակի բարձրացման և փաստաբանության կայացման գործում, խաթարում է որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացմանն ուղղված տարիների ընթացքում արված բազմաթիվ և բազմաբնույթ քայլերը:

Ի վերջո, իրավաբանական օգնության ստանալու քաղաքացու ազատությունը բացարձակ չէ, քանի որ նախ, ինչպես արդեն նշել ենք, պետությունն է սահմանում ներպետական դատավարական ընթացակարգերի բովանդակությունը և պատասխանատու է արդար դատաքննության, արդարադատության մատչելիության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և որակյալ իրավաբանական օգնության ապահովման համար: Ոչ որակյալ իրավաբանական օգնությունից տուժում է ոչ միայն տվյալ քաղաքացին, այլ նաև արդարադատությունը և պետության իրավակարգն ընդհանրապես: Հետևաբար, քաղաքացին իրավաբանական օգնություն ստանալու իր իրավունքը չի կարող իրականացնել այլ կերպ, քան սահմանված է պետության կողմից՝ օրենսդրական պահանջներին համապատասխան:

Ավելորդ չի լինի ավելացնել նաև, որ վիճարկվող նորմերով միայն փաստաբանի միջոցով իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի սահմանափակումը վերաբերում է միայն քաղաքացիական դատարանում դատական ներկայացուցչությանը. այն չի տարածվում իրավաբանական խորհրդատվության ձևով իրավաբանական օգնության վրա, ներառյալ՝ վստահորդներին խորհրդատվություն տրամադրելը նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը:

Այսպիսով, վիճարկվող դրույթները չեն հակասում Սահմանադրությամբ սահմանված իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը նախատեսող

սահմանադրաիրավական նորմերին:

գ) Խտրականության արգելքի սկզբունքը (ՀՀ Սահմ, հոդվ. 28, 29¹)

Անհատական սահմանադրական դիմումով վիճարկվող դրույթների սահմանադրականությունն անհրաժեշտ է ստուգել խտրականության արգելքի սահմանադրական սկզբունքին համապատասխանության համատեքստում՝ պարզելու համար Դիմողի պնդման հիմնավորվածությունը:

ՀՀ Սահմանադրության 14.1-րդ (2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 28, 29-րդ հոդվածների) հոդվածի համաձայն՝ *Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև:*

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Նշված սահմանադրական նորմն ամրագրում է օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելքի սկզբունքը, որը նշանակում է՝ «միևնույն կատեգորիայի» անձանց նկատմամբ տարբերությունների բացառում և «հավասար պայմանների առկայության դեպքում մարդկանց հավասար վիճակ»:²

Դիմողի պնդմամբ, վիճարկվող դրույթները հակասում են նաև ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածներին, քանի որ իրավաբանը, ով փաստաբան չէ, իրավունք ունի ներկայացուցչություն իրականացնել ՀՀ սահմանադրական դատարանում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, ՀՀ վարչական դատարանում, ՀՀ ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես տուժողի ներկայացուցիչ՝ քրեական գործերով, սակայն քաղաքացիական գործի շրջանակում չի կարող լինել ֆիզիկական կամ իրավաբանական անձի ներկայացուցիչը: Վիճարկվող իրավակարգավորումները հակասում են խտրականության արգելքի սահմանադրական սկզբունքին, քանի որ, ըստ Դիմողի, օրենսդրության մեջ համապատասխան դեպքերում սահմանված չեն փաստաբան հանդիսացող և

¹ Մինչև ՀՀ Սահմանադրության 2015թ. փոփոխությունները, նշված դրույթներն ամրագրված էին Սահմանադրության 14.1-րդ հոդվածում:

² ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջ 174-175:

փաստաբան չհանդիսացող անձանց տարբերակման նպատակը, համաչափությունը և ողջամիտ հիմնավորումը:

Ինչպես արդեն նշել ենք, համապատասխան օրենսդրական փոփոխությունների նպատակը, դրանց իմաստն ու նշանակությունը մանրամասն շարադրված է այդ օրենսդրական փոփոխությունների նախագծերի հիմնավորումներում: Ավելին, վիճարկվող դրույթների ընդունման անհրաժեշտությունը բխում է վերևում քննարկված դատական պաշտպանության արդյունավետ միջոցների, արդար դատաքննության, արդարադատության մատչելիության, իրավաբանական օգնության սահմանադրական իրավունքներից և այդ իրավունքների իրացման երաշխավորման պետության պոզիտիվ պարտականությունից: Ավելին, այդ փոփոխությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 2015թ. փոփոխությունների 64-րդ հոդվածի 2-րդ մասի հետ:

Դատական ներկայացուցչությունը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով իրականացնելու իրավունքի տարբերակումը փաստաբանների և ոչ փաստաբանների միջև, այո՛, պայմանավորված է իրավաբանական օգնության որակի, դատական պաշտպանության արդյունավետության բարձրացման նպատակով, և նման տարբերակումը ողջամիտ է, հետապնդում է իրավաչափ նպատակ և ունի օբյեկտիվ հիմնավորում: Ընդ որում, միայն փաստաբանի միջոցով դատական ներկայացուցչության իրականացման պահանջի և հետապնդվող նպատակի միջև առկա է արդարացի հավասարակշռություն:

Ինչպես արդեն նշել ենք, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է բացառություններ փաստաբանի միջոցով դատական ներկայացուցչության իրականացման հնարավորության հարցում:

Մասնավորապես, դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը այլ անձի (ոչ փաստաբանի) կողմից թույլատրվում է, եթե այն՝

- ա) պարբերաբար մատուցվող ծառայություն չէ, կամ
- բ) վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն չէ, կամ
- գ) ուղղված է մերձավոր ազգականի համար անվճար ներկայացուցչություն իրականացնելուն, կամ
- դ) ուղղված է մերձավոր ազգականին (ազգականներին) կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանող իրավաբանական անձի շահերը դատարանում ներկայացնելուն:

Նշված բացառությունների սահմանումը պետության կողմից նպատակ ունի թույլատրել քաղաքացուն բացառիկ՝ օրենքով նախատեսված վերոնշյալ դեպքերում օգտվել այլ անձի ծառայություններից և պարտադրված չլինել անպայման դիմելու

փաստաբանի օգնությանը՝ դրանով իսկ ապահովելով դատական ներկայացուցչության ձևով իրավաբանական օգնություն ստանալու ազատությունը և միաժամանակ սահմանափակելով դատական ներկայացուցչություն իրականացնող անձի կողմից այդ գործունեությունը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով իրականացնելու հնարավորությունը:

Իսկ այն դեպքում, երբ դատական ներկայացուցչությունն իրականացվում է պարբերաբար, վճարովի հիմունքներով կամ ոչ մերձավոր ազգականի կողմից, պետությունը սահմանափակում է իրավաբանական օգնության այդպիսի տեսակով զբաղվելու անձի ազատությունը՝ **թույլատրելով միայն փաստաբաններին զբաղվելու այդ գործունեությամբ**: Բանն այն է, որ պարբերաբար կամ վճարովի հիմունքներով դատական ներկայացուցչության իրականացման պարագայում, ի տարբերություն ոչ պարբերաբար կամ անվճար հիմունքներով իրականացվող դեպքերի, անհրաժեշտություն է առաջանում որոշակիորեն համախմբելու այդպիսի գործունեությամբ զբաղվելու իրավունք ունեցող անձանց, կանոնակարգելու և համակարգելու վերջիններիս գործունեությունը, կանխելու, խափանելու և պատժելու վերջիններիս կողմից թույլ տրվող չարաշահումներն ու կամայականությունները՝ իրավաբանական օգնության որակի, օրինականության ամրապնդման, մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորման և դատական պաշտպանության արդյունավետության բարձրացման նպատակով: Ահա այս խնդիրների լուծմանն էլ հենց ուղղված են վիճարկվող իրավակարգավորումները՝ մասնավորապես, և փաստաբանության ինստիտուտն՝ ընդհանրապես:

Պետության կողմից սահմանված օրենսդրական միջոցներն ու իրավական կառուցակարգերը, որոնցով օրենսդիրը ուղղակի կամ անուղղակի կերպով նպատակ է հետապնդում ապահովել որակյալ իրավաբանական օգնություն՝ տարբերակելով փաստաբան հանդիսացող և փաստաբան չհանդիսացող անձանց, ի թիվս այլոց, հետևյալներն են.

- ՀՀ փաստաբանական դպրոցի նախատեսումը և ստեղծումը,
- ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության ընթացակարգերը,
- փաստաբանների որակավորման, արտոնագրման և վերապատրաստման ընթացակարգերը,
- փաստաբանների վարքագծի կանոնների սահմանումը, կարգապահական պատասխանատվության միջոցները,
- փաստաբանի գործունեության երաշխիքները,
- փաստաբանի արտոնագիրը դադարեցնելու, այն կասեցնելու մեխանիզմները,
- հանրային պաշտպանի ինստիտուտը և այլն:

Բնականաբար, վերը թվարկված կառուցակարգերը վերաբերում են միայն

փաստաբաններին. փաստաբան չհանդիսացող անձանց վրա դրանք չեն տարածվում: Ոչ փաստաբան իրավապաշտպանները չեն օգտվում փաստաբանական գործունեության երաշխիքներից և փաստաբանի իրավունքներից, կաշկանդված չեն փաստաբանի վարքագծի կանոնագրքով, փաստաբանի պարտականություններով և պատասխանատվությամբ:

Եթե դատական ներկայացուցչությունը թույլատրվի փաստաբան չհանդիսացող այլ անձանց ևս, կստացվի, որ վերջիններս կարող են, օրինակ, թույլ տալ փաստաբանի համար կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող խախտումներ (օրինակ՝ ի վնաս իր վստահորդի տեղեկություններ փոխանցել հակառակորդ կողմին) և չենթարկվել կարգապահական պատասխանատվության, քանի որ փաստաբան չեն՝ շարունակելով իրենց անվերահսկելի իրավապաշտպան գործունեությունը: Այդ դեպքում կստեղծվի կամայական վիճակ, երբ իրավապաշտպան գործունեությամբ կհավակնեն զբաղվել ոչ միայն խիստ գիտակ և հմուտ իրավաբաններ, **այլ նույնիսկ իրավաբանի մասնագիտություն չունեցող անձինք**, ինչը լի է չարաշահումների, մարդու իրավունքների խախտումների, արդարադատությանը խոչընդոտելու բազմաթիվ վտանգներով: Այդպիսի վիճակն անթույլատրելի է առնվազն անձի որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորման դիրքերից:

Ինչ վերաբերում է Դիմողի այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ խտրականության արգելքի սկզբունքի խախտում է նաև այն, որ անձի ներկայացուցչի փաստաբան հանդիսանալը, ի տարբերություն քաղաքացիական դատավարության, պարտադիր չէ վարչական դատարանում, սահմանադրական դատարանում, եվրոպական դատարանում ներկայացուցչություն իրականացնելու դեպքերի, ինչպես նաև քրեական գործերով տուժողի իրավունքները պաշտպանելիս, ևս ընդունելի չէ:

Բանն այն է, որ, օրինակ, վարչական դատարանը գործի քննությունն իրականացնում է **ի պաշտոնե** («Վարչական դատավարության օրենսգիրք, հոդվ. 5): Նույնը վերաբերում է նաև «Սահմանադրական դատարանին» («Սահմանադրական դատարանի մասին» «Օրենք, հոդվ. 5, 19): Մարդու իրավունքների եվրոպական դատարանում այդ հարցի կարգավորումը միջազգային իրավական մոտեցման խնդիր է: Ինչ վերաբերում է քրեական գործերով տուժողի իրավունքների պաշտպանությանը, ապա նման տարբերակման հիմքում ամենայն հավանականությամբ ընկած է այն, որ տուժողը քրեական դատավարությունում ընդգրկված է մեղադրանքի կողմում, և տուժողի իրավունքների խախտման առկայությունն ապացուցելու պարտականությունը կրում է մեղադրողը: Այնուամենայնիվ, քրեական գործերով տուժողի իրավունքների պաշտպանությունը միայն փաստաբանին վստահելու նպատակահարմարության հարցը օրենսդրի

հետագա որոշման խնդիրն է, և ներկա իրավական կարգավորումը չի կարող ծառայել խնդրո առարկա դրույթների սահմանադրականության ստուգման չափանիշ և կողմնորոշիչ: Ավելին, ոչ փաստաբանի միջոցով տուժողի իրավունքների պաշտպանության հնարավորությունը չի համապատասխանում եվրոպական լավագույն փորձին, և նույնիսկ առաջարկվում է վերանայել փաստաբան չհանդիսացող անձի իրավունքն իրականացնելու մարդու իրավունքների պաշտպանություն քրեական գործերով¹: Ուստի, քննարկվող իրավակարգավորումն ինքնին կարող է հարուցել սահմանադրականության խնդիր և չի կարող հիմք հանդիսանալ վիճարկվող դրույթների սահմանադրականությունը գնահատելու համար:

Դիմողի այն պնդումը, որ միայն փաստաբանների միջոցով դատական ներկայացուցչության պահանջի և դրանով հետապնդվող նպատակի միջև արդարացի հավասարակշռությունը խնդրո առարկա նորմով խախտված է այնքան, որ խաթարում է դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքի էությունը, հիմնավորված և արդարացի չէ:

Դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքին մանրամասն անդրադարձել ենք վերևում: Սույն կետի շրջանակներում ընդամենն ավելացնենք, որ միայն փաստաբանների միջոցով դատական ներկայացուցչության պահանջը որևէ կերպ չի սահմանափակում անձի՝ դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքը, քանի որ յուրաքանչյուր ոք ազատ է նախ **անձամբ դիմելու դատարան և ինքնուրույն** պաշտպանելու իր իրավունքներն ու շահերը դատարանում: Միաժամանակ, յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն օգտվելու իրավաբանական օգնությունից, մասնավորապես՝ փաստաբանի ծառայություններից, իսկ բավարար ֆինանսական միջոցներ չունենալու դեպքում՝ դիմելու հանրային պաշտպանի օգնությանը:

Ինչպես հայտնի է, ՀՀ օրենսդրությամբ սահմանված են այն հիմքերը և անձանց շրջանակը, երբ իրավաբանական օգնությունը ցույց է տրվում անվճար՝ պետական միջոցների հաշվին: ՀՀ փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեությունն ու այդ գործունեության վիճակագրությունը ցույց է տալիս, ներկայումս Հանրային պաշտպանի գրասենյակը գործում է արդյունավետ՝ ապահովելով այն անձանց իրավաբանական օգնության իրավունքի իրացումը, որոնք օրենքի ուժով ունեն անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք:

¹ Рабочая группа «Профессиональные судебные системы» – Доклад «Профессия адвоката» / Совместная программа Европейского Союза и Совета Европы «Восточное партнерство – Содействие правовой реформе в странах Восточного партнерства». Генеральная дирекция по вопросам прав человека и верховенства права. – Страсбург, май 2012, էջ 23:

Այսպիսով, վիճարկվող դրույթների սահմանադրականությունը Սահմանադրությամբ սահմանված խտրականության արգելքի սկզբունքի տեսանկյունից խնդրահարույց չէ:

**դ) Ազատ տնտեսական գործունեության և սեփականության իրավունք
(ՀՀ Սահմ., հոդվ. 11, հոդվ. 60¹)**

Քննարկվող սահմանադրաիրավական վեճի շրջանակներում պարզաբանման է ենթակա նաև այն հարցադրումը, թե արդյո՞ք իրավապաշտպան գործունեությունը ձեռնարկատիրական գործունեության (ազատ տնտեսական գործունեության) տեսակ է, և քաղաքացիական դատավարությունում ներկայացուցչություն իրականացնելու իրավունքի վերապահումը միայն փաստաբանին սահմանափակում է անձի տնտեսական գործունեության ազատությունն ընդհանրապես և քննարկվող գործով՝ մասնավորապես:

Ինչպես արդեն նշել ենք, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածները՝ Դիմողը նշում է, որ իրավապաշտպան գործունեությունը ձեռնարկատիրական գործունեություն է՝ անկախ դրա վճարովի կամ անվճար լինելու հանգամանքից, վճարովի լինելու պարագայում՝ անկախ դրա համար վճարման աղբյուրներից և վճարող անձի ով լինելուց: Հետևաբար, անձն իրավունք ունի զբաղվել իրավապաշտպան գործունեությամբ որպես իր տնտեսական գործունեության ազատության իրացում:

Տնտեսական գործունեության ազատությունը շուկայական տնտեսության ազատության հիմնարար սկզբունքն է, որը Սահմանադրության 8-րդ հոդվածում ամրագրված այլ դրույթների հետ մեկտեղ հանդես է գալիս որպես ազատական տնտեսական հարաբերությունների ձևավորման ու զարգացման օբյեկտիվ նախադրյալ: Տնտեսական գործունեության ազատությունը նշանակում է իրավաբանորեն երաշխավորված հնարավորություն՝ ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքը օրենքով չարգելված տնտեսական գործունեության համար, այսինքն՝ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն²:

Ձեռնարկատիրական գործունեությունը հանդես է գալիս որպես ձեռնարկատեր գրանցված անձի ինքնուրույն, իր ռիսկով ու օրենքով սահմանված կարգով

¹ Մինչև ՀՀ Սահմանադրության 2015թ. փոփոխությունները, նշված դրույթներն ամրագրված էին Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածում:

² ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջ 121-122:

իրականացվող գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Պետությունը, պահպանելով շուկայական տնտեսության հիմունքները, ստանձնում է տնտեսության կարգավորման գործառույթը: Պետությունը սահմանում է տնտեսական ազատությունը՝ երաշխավորելով շուկայական տնտեսության համակարգի հիմունքները, իսկ մյուս կողմից՝ որոշելով «խաղի կանոնները» տնտեսվարող առանձին սուբյեկտների համար:

Ինչպես նշվեց, պետության կարևոր պարտականությունն է նաև նախադրյալներ ստեղծել, ձևավորել անհրաժեշտ ենթակառուցվածքներ՝ շուկայական տնտեսական հարաբերությունները պայմանավորող օբյեկտիվ տնտեսական օրենքների գործողությունը երաշխավորելու համար:

Ազատ տնտեսական գործունեության իրավունքը բացարձակ չէ, քանի որ դրա չարաշահումը լի է սոցիալական պայթյունով: Պետությունը ոչ միայն պետք է երաշխավորի այդ ազատությունը, այլև կարգավորի դրա իրացումը՝ տնտեսությանը տալով կայուն զարգացման կողմնորոշում: Ձեռնարկատիրոջ ազատությունը չպետք է ծնի կամայականություն: Ուստի, պետությունը պետք է պաշտպանի սպառողների շահերը, ընդունի օրենքներ, որոնք կոչված են կանխելու հնարավոր չարաշահումները ձեռներեցների կողմից, իր ձեռքում պահի անհրաժեշտ տնտեսական լծակները: Այդ տեսանկյունից ժամանակակից քաղաքացիական հասարակության տնտեսությունը բնորոշվում է որպես սոցիալական-շուկայական տնտեսություն, որի պայմաններում կարող են սահմանափակվել ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների ազատությունները՝ պայմանավորված այդ գործունեության սոցիալական հետևանքներով:

Վերոնշյալ մեկնաբանությունից հետևում է, որ **իրավապաշտպան գործունեությունը կարող է լինել ձեռնարկատիրական գործունեության տեսակ**, եթե այդպիսի գործունեություն իրականացնողը, պարբերաբար և վճարովի հիմունքներով իրավաբանական բնույթի ծառայություններ մատուցելով, նպատակ է հետապնդում ստանալ շահույթ: Հետևաբար, իրավապաշտպան գործունեության ազատությունը որպես ազատ տնտեսական գործունեություն, ենթարկված է իրավական կարգավորման պետության կողմից սպառողների (վստահորդների) շահերի պաշտպանության համար, կանխելու հնարավոր չարաշահումները իրավապաշտպան ձեռներեցների կողմից:

¹ Տե՛ս նույն տեղում:

Այդպիսի իրավական կարգավորմանն է ուղղված վիճարկվող իրավակարգավորումների բովանդակությունը՝ սահմանափակելու ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող իրավապաշտպանների ազատությունները՝ պայմանավորված այդ գործունեության սոցիալական հետևանքներով: Այլ կերպ ասած՝ պետությունը թույլատրելով իրավապաշտպան գործունեությունն ընտրելու որպես ազատ տնտեսական գործունեության տեսակ, միաժամանակ այդ գործունեության ազատությունը որոշակի դեպքերում պայմանավորել է այդ գործունեությամբ զբաղվող սուբյեկտի առանձնահատկություններով՝ փաստաբանի արտոնագիր ունենալու (փաստաբան հանդիսանալու) հանգամանքով: Այդպիսի իրավական սահմանափակումը պետության կողմից նպատակ է հետապնդում առավել որակյալ դարձնել իրավապաշտպան գործունեությունը, վերահսկողություն սահմանել գործունեության այդ տեսակի նկատմամբ, կանխել հնարավոր սոցիալական հետևանքները:

Ավելացնենք նաև, որ քննարկվող անհատական դիմումի շրջանակներում վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը՝ ՀՀ Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածներին ստուգելիս, պետք է հաշվի առնել, որ Դիմող քաղաքացիներ Հմայակ Խալաֆյանը, Անահիտ Վարդանյանը, Վարդան Խալաֆյանը և Անի Խալաֆյանը իրավապաշտպան գործունեություն իրականացնող սուբյեկտներ չեն, հետևաբար՝ նրանց ազատ տնտեսական իրավապաշտպան գործունեություն իրականացնելու սահմանադրական իրավունքը չէր կարող խախտվել, ուստի, այդ մասով վերջիններս պատշաճ դիմումատու չեն, իսկ երկրորդ դիմող իրավապաշտպան Արտակ Զեյնալյանի անհատական դիմումի ընդունումը ՀՀ սահմանադրական դատարանի 2015թ. դեկտեմբերի 7-ի՝ անհատական դիմումի ընդունելիության հարցի վերաբերյալ թիվ ՍԴԴԿՈ/2-22 որոշմամբ մերժվել է (նույնը վերաբերում է նաև ՀՀ Սահմանադրության 23, 27.1-րդ հոդվածների հիմքով դիմումի հիմնավորումներին):

Այսպիսով, վիճարկվող դրույթների իրավակարգավորումները չեն սահմանափակում տնտեսական գործունեության ազատության իրավունքը, և հետևաբար, այդ մասով ևս համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

Բացի այդ, պետությունը կաշկանդված չէ որոշակի գործունեությունների համար նախատեսել սահմանափակումներ, այդ թվում՝ սահմանել լիցենզավորման պահանջ, նախատեսել որոշակի որակավորման պահանջներ և այլն:

Այսպես, 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:*

Փաստորեն, տվյալ դեպքում պետությունը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանել է համապատասխան պայման դատական ներկայացուցչությունը՝ որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար, այն է՝ դրա իրացման համար անհրաժեշտ է ստանալ փաստաբանական գործունեության արտոնագիր: Նշվածը լիովին համապատասխանում է Սահմանադրության վերը նշված դրույթին:

դ) Միջազգային և օտարերկրյա իրավական կարգավորումներ

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950 թ. եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (գ) կետի համաձայն՝ **Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.**

պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը:

Նախ՝ հարկ ենք համարում նշել, որ նշված կոնվենցիոն նորմը չի վերաբերում քաղաքացիական դատավարության կարգով քննվող քաղաքացիական գործերին, հետևաբար դիմող կողմի պնդումը տեղին չէ: Մասնավորապես, Էիրին Իռլանդիայի դեմ գործով դատական ակտում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (գ) կետը վերաբերվում է միայն քրեական դատավարությանը¹:

Բացի այդ, նշված միջազգային իրավական նորմի մեկնաբանության վերաբերյալ առկա են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք նախադեպեր:

Մասնավորապես, եվրոպական դատարանի դիրքորոշմամբ մեղադրյալն իրավունք ունի իր պաշտպանությունն իրականացնելու համար օգտվել իր ընտրած փաստաբանի կողմից տրամադրվող իրավաբանական օգնությունից միայն այն դեպքում, եթե ունի բավարար ֆինանսական միջոցներ փաստաբանի ծառայությունների դիմաց վճարելու համար: Մեղադրյալի մոտ անհրաժեշտ միջոցների բացակայության դեպքում նրան կարող է պարտավորեցվել պաշտպանվել ինքնուրույն, եթե «արդարադատության շահերը» չեն պահանջում իրավական ներկայացուցչություն²:

¹ Տե՛ս ECHR, Airey v. Ireland, 09 October 1979, § 26):

² Տե՛ս ECHR, Campbell and Fell v. United Kingdom (28 June 1984) (appl. n. 7819/77; 7878/77):

Ըստ Եվրոպական դատարանի՝ փաստաբանի ընտրության իրավունքի մասին խոսք կարող է լինել միայն այն դեպքում, եթե մեղադրյալը տիրապետում է փաստաբանի ծառայությունների դիմաց վճարելու բավարար միջոցների: Համաձայն Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (գ) կետի՝ մեղադրյալը, որին ցուցաբերվում է իրավաբանական օգնություն, իրավունք չունի իր համար ընտրել ներկայացուցիչ կամ ստանալ խորհրդատվություն այդ հարցի շուրջ¹:

Եվրոպական դատարանն արձանագրել է, որ ներկայացուցչի ընտրության իրավունքը, նույնիսկ անհրաժեշտ միջոցների բավարարության դեպքում, բոլոր դեպքերում բացարձակ չէ: Պետությունն իրավունք ունի կանոնակարգելու դատարանում փաստաբանների մասնակցության դեպքերը, և որոշակի հանգամանքներում արգելել որոշակի անձանց մասնակցության հնարավորությունը: Օրինակ, դատարանում հանդես գալու համար պետությունը կարող է նախատեսել որոշակի որակավորման պահանջ կամ մշակել մասնագիտական էթիկայի կանոններ, որոնք կանոնակարգում են դատարանում փաստաբանների աշխատանքը: Որոշակի թվով փաստաբանների մասնակցության սահմանափակումը դատարանում (ոչ ավել քան երեք), որոնք իրավունք ունեն պաշտպանելու մեղադրյալի շահերը դատարանում, ճանաչվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (գ) կետին համապատասխանող: Նմանապես, Կոնվենցիային համապատասխանող է ճանաչվել նաև այն սահմանափակումը, համաձայն որի՝ արգելվում է այն փաստաբանների մասնակցությունը գործի քննությանը դատարանում, որոնց կապակցությամբ առկա են կասկածներ այնպիսի հանցավոր կապերի պահպանման մասին, որոնց մեջ մեղադրվում է մեղադրյալը²:

Այսպիսով, ըստ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (գ) կետի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնաբանությունների, **դատարանում փաստաբանի ընտրությունը անձի բացարձակ, անսահմանափակ իրավունք չէ, և պետությունը կարող է սահմանել այլ պահանջներն ու չափորոշիչները, որոնց հիման վրա անձը դատարանում կարող է հանդես գալ որպես մեկ այլ անձի ներկայացուցիչ՝ վերջինիս իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար:**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներում նշում է, որ Պետությունը պարտավոր չէ անվճար իրավաբանական օգնություն տրամադրել բոլոր գործերով, որոնք վերաբերվում են քաղաքացիական իրավունքներին. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի լույսի ներքո որոշակի

¹ St' u ECHR, Krempovskij v. Lithuania (20 April 1999) (appl. n. 37193/97):

² St' u ECHR, Ensslin, Baader and Raspe v. Federal Republic of Germany (8 July 1978) (appl. n. Appls 7572/76, 7586/76 and 7587/76):

դեպքերում Պետությունը կարող է պարտավորված լինել փաստաբան հատկացնելու նաև ոչ քրեական գործերով, եթե դա անհրաժեշտ է ապահովելու համար արդարադատության իրական մատչելիությունը կամ եթե Պետության ներքին իրավական ակտերով որոշակի գործերի քննության համար փաստաբանի մասնակցությունը պարտադիր է կամ կախված գործի բարդությունից:

Ընդ որում, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի ուժով որոշակի դեպքերում քաղաքացիական գործերով իրավաբանական օգնության տրամադրման հարցում Կոնվենցիան Պետության հայեցողությանն է թողնում այդ նպատակի համար համապատասխան միջոցների ընտրության հարցը¹:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն 2000թ. հոկտեմբերի 25-ին հաստատել է փաստաբանի մասնագիտության ազատության մասին հանձնարարականը: Այդ փաստաթղթով, ի նկատի ունենալով Եվրոպական կոնվենցիայի դրույթները և Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից հաստատված Իրավաբանների դերին վերաբերող սկզբունքները և ընդգծելով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում փաստաբանների և նրանց միավորումների հիմնարար դերը, նպատակ ունենալով ապահովել փաստաբանական մասնագիտական գործունեության ազատությունը օրինականության ամրապնդման նկատառումներով՝ Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների կառավարություններին առաջարկվում է, կախված իրավիճակից և հանգամանքներից, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ այն սկզբունքների իրականացման ուղղությամբ, որոնք նախատեսված են այդ հանձնարարականով:

Ընդ որում, ԵԽ նշված հանձնարարականը, ի թիվս այլ սկզբունքների, անդամ պետություններից պահանջում է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները անձի՝ **անկախ փաստաբանների կողմից արդյունավետ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովման ուղղությամբ** (սկզբունք 4)²:

2012թ. մայիսին «Եվրոպական Միության Արևելյան Գործընկերություն – Արևելյան գործընկերության երկրներում իրավական բարեփոխումներում համագործակցություն» ծրագրի շրջանակներում «Մասնագիտացված դատական համակարգեր» աշխատանքային խմբի կողմից կազմվել է զեկույց (**այսուհետ՝ նաև Զեկույց**) փաստաբանի մասնագիտության վերաբերյալ³:

¹ Տե՛ս ECHR, Airey v. Ireland, 09 October 1979, § 26):

² Տե՛ս Рекомендация № Rec(2000)21 Комитета министров о свободе осуществления профессии адвоката:

³ Рабочая группа «Профессиональные судебные системы» – Доклад «Профессия адвоката» / Совместная программа Европейского Союза и Совета Европы «Восточное партнерство – Содействие правовой реформе в странах Восточного партнерства». Генеральная дирекция по вопросам прав человека и верховенства права. – Страсбург, май 2012, 318 էջ:

Ըստ այդ զեկույցի հեղինակների կողմից կատարված հետազոտությունների, բազմաթիվ զարգացած եվրոպական երկրներ որդեգրել են այն մոտեցումը, որ թե՛ դատական ներկայացուցչության, **թե՛ իրավաբանական խորհրդատվության ձևով իրավաբանական օգնություն տրամադրելու իրավունքը բացառապես փաստաբանների մենաշնորհն է** (Ավստրիա, Կիպրոս, Չեխիա, Գերմանիա, Վենգրիա):

Կան նաև որոշ եվրոպական երկրներ, որոնցում փաստաբանները մենաշնորհային դիրք են զբաղեցնում միայն դատարանում՝ դատական ներկայացուցչության ձևով իրավաբանական օգնություն տրամադրելով: Այդ երկրներում իրավաբանական խորհրդատվության ձևով իրավաբանական ծառայություններ, փաստաբաններից բացի, կարող են մատուցել նաև փաստաբան չհանդիսացող անձինք, ինչպես Հայաստանի Հանրապետությունում է (Բելգիա, Լիտվա, Պորտուգալիա, Նորվեգիա)¹:

Ըստ զեկույցի՝ նման տարբերակման հիմքում դրված է **իրավաբանական օգնության որակի** խնդիրը: Այն պետք է լինի **իրական և արդյունավետ**:

Այսպիսով, դատական ներկայացուցչությունը քաղաքացիական դատավարությունում միայն փաստաբանի մենաշնորհային գործունեություն նախատեսելը ՀՀ օրենսդրությամբ համապատասխանում է զարգացած երկրներում ընդունված իրավակարգավորումներին և համընդհանուր ճանաչում ստացած միջազգային չափանիշներին ու սկզբունքներին:

ե) Դիմող կողմի այլ փաստարկների վերաբերյալ

Դիմող կողմը ներկայացնելով դատական համակարգից և ՀՊԳ-ից որոշ վիճակագրական տվյալներ, յուրովի մեկնաբանելով դրանք գտել է, որ՝ «..ըստ վիճակագրական տվյալների բողոքարկվել է քրեական գործերով առաջին ատյանի դատարանների դատական ակտերի 12%-ը՝ և ՀՊԳ պաշտպանների, և մնացած փաստաբանների կողմից... ..Ընդհանուր առմամբ հանրային պաշտպանների կողմից բերվել է 139 վերաքննիչ բողոք, որը կազմում է 3,8%..»:

Դիմող կողմի նշած թվերը՝ 2014թ. համար՝ 139 վերաքննիչ բողոք և 41 վճռաբեկ բողոք կազմում են ՄԻԱՅՆ 2014թ. 2-րդ կիսամյակի տվյալները, մինչդեռ 2014թ. 1-ին կիսամյակում կազմված վերաքննիչ բողոքների թիվը կազմում է 71, իսկ վճռաբեկ բողոքների թիվը՝ 21: Հետևաբար, բողոքարկումների պատկերը ամբողջ

http://www.coe.int/t/dghl/cooperation/capacitybuilding/source/judic_reform/RU%20Profession%20of%20Lawyers_Russian_Final%20version.pdf

¹ Տե՛ս նշված Զեկույցը, էջ 21:

2014թ. համար կլինի հետևյալը.

2014թ. ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում վարած գործերի թիվը կազմում է 3666¹ :

Առաջին ատյանի դատարանում վարած գործերի թիվը կազմում է 1737, որից ավարտված գործերի թիվը՝ 1261: Վերաքննիչ բողոքարկումների թիվը կազմում է 210, հետևաբար՝ բողոքարկումների քանակը կազմում է **16,7%**:

Վերաքննիչ դատարանում վարած գործերի թիվը կազմում է 445, որից ավարտված գործերի թիվը՝ 383: Վճռաբեկ բողոքարկումների թիվը կազմում է 62, հետևաբար բողոքարկումների քանակը կազմում է **16,1%**:

Հատկանշական է, որ՝

- միայն դատավճիռների դեմ վերաքննության կարգով 2014 թվականին բերվել է 210 բողոք, իսկ 2015 թվականին՝ 263 բողոք (աճը 25%):

- միայն կալանավորման որոշումների դեմ վերաքննության կարգով 2014 թվականին բերվել է 92 բողոք, իսկ 2015 թվականին՝ 207 բողոք (աճը 125%):

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 26.03.2015թ. թիվ 08/10-L որոշմամբ հաստատված Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգի² 4.2 կետի «լ» ենթակետի համաձայն՝ քրեական գործերով փաստաբանական վարույթում առնվազն պետք է կցվեն. վերաքննիչ և վճռաբեկ բողոքները (այդ թվում՝ կալանավորումը, որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշման դեմ բերված բողոքը), եթե այդպիսիք բերվել են, **իսկ բերված չլինելու դեպքում սույն Կանոնակարգով նախատեսված վստահորդի հանձնարարականը և կազմած տեղեկանք՝ դատական ակտի չբողոքարկման վերաբերյալ:**

Նշվածից հետևում է, որ որպես կանոն պետք է բոլոր գործերով հանրային պաշտպանները բողոքներ ներկայացնեն, եթե վստահորդները չբողոքարկելու հանձնարարական չտան:

Սա, իհարկե, վերաբերում էր քրեական գործերի վիճակագրությանը, մինչդեռ քաղաքացիական (վարչական, սահմանադրական)³ գործերով պատկերը հետևյալն է՝

2013թ. առաջին ատյանի դատարանում ավարտված գործերի քանակը կազմում է 70, իսկ վերաքննիչ բողոքների քանակը՝ 15, հետևաբար, բողոքարկումների քանակը կազմում է՝ **21,4%**:

2013թ. վերաքննիչ դատարանում ավարտված գործերի քանակը կազմում է 9,

¹ Նշված թիվը չի ներառում չի ներառում վճռաբեկ դատարանում գործերի թիվը (6) և քրեական այլ գործերով թիվը (45), ընդամենը՝ (51):

² http://advocates.am/images/hpg_mrcuyt/HPG-kanonakarg-2015-verjnakan-mart-verjn.pdf

³ Այսուհետ՝ պայմանականորեն կնշվի քաղաքացիական

իսկ վճարել բողոքների քանակը՝ 2, հետևաբար, բողոքարկումների քանակը կազմում է՝ **22,2%**:

2014 և 2015թթ. ժամանակահատվածում համարյա բոլոր գործերով ներկայացվել են վերաքննիչ բողոքներ: Այսպես՝

Նկարագրությունը	2014	2015
Հաշվետու ժամանակաշրջանում դատական գործերի թիվը	198	350
Հաշվետու ժամանակ. ավարտված դատ. գործերի թիվը	91	163
Առաջին ատյանում ավարտված գործերի (վճիռների) թիվը	78	137
Ամբողջությամբ կամ մասամբ հոգուտ վստահորդի կայացված վճիռների թիվը	54	88
Ամբողջությամբ ի վնաս վստահորդների կայացված վճիռների թիվը	24	49
ՀՊԳ վերաքննիչ բողոքների թիվը, այդ թվում՝ մասնակի բավարարված վճիռների դեմ՝ մերժման մասով	29	67

Ինչպես տեսնում ենք քաղաքացիական գործերով բողոքարկման տոկոսը մեծ է:

Հատկանշական է, որ հանրային պաշտպանի գրասենյակի 2013-2015թթ. ընթացքում չի եղել մի դեպք, երբ գրասենյակը մերժի դիմողին՝ ծանրաբեռնված լինելու պատճառով:

Դիմող կողմը նաև այնպիսի իրավիճակ է օրինակ բերել, երբ «ֆիզիկական կամ իրավաբանական անձի հակառակորդը քաղաքացիական դատավարությունում փաստաբանների պալատն է կամ հանրային պաշտպանի գրասենյակը. Այդ դեպքում վիճարկվող իրավակարգավորումը անձին բացարձակապես զրկում է դատական պաշտպանության իրավունքից. Կլինի շահերի բախում՝ անձի շահերը դատարանում չի կարող ներկայացնել նույն գործով հակառակորդ կազմակերպության անդամը»:

Այս փաստարկը նույնպես չի դիմանում քննադատությանը, քանի որ՝

- հանրային պաշտպանի գրասենյակը չի կարող լինել հայցվոր կամ պատասխանող, այն պարզ պատճառով, որ չունի իրավաբանական անձի կարգավիճակ (Տես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդված).

- փաստաբանների պալատի և քաղաքացու միջև վեճի դեպքում, եթե քաղաքացին անվճար իրավաբանական օգնություն ակնկալի, ապա փաստաբանների պալատը կարող է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով ժամավճարային դրույքաչափեր նախատեսող աշխատանքային պայմանագրեր կնքել հանրային պաշտպանի գրասենյակում չընդգրկված փաստաբանների հետ.

- ինչ վերաբերում է իրավաբանական անձի և փաստաբանների պալատի միջև վեճ լինելու օրինակին, ապա անվճար իրավաբանական օգնության շահառուները միայն ֆիզիկական անձինք են:

Սույն կարծիքի տեքստում կարմիր թելով տարված որակյալ իրավաբանական օգնություն ապահովելու պատճառաբանությամբ միայն փաստաբանի մատչելիությունը հիմնավորվում է նաև փաստաբանական դպրոցի ուսումնական ծրագրերով, մասնավորապես՝ Փաստաբանական դպրոցում դասավանդվում են հետևյալ դասընթացները (վեց ամսվա ընթացքում)՝

Քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածությամբ

1. Ներկայացուցչությունը քաղաքացիական դատավարությունում (Գործնական հմտություններ).
2. Ապացույցները և ապացուցման գործընթացը քաղաքացիական դատավարությունում.
3. Փաստաբանական մարտավարական հնարքներ, տակտիկա.
4. Բողոքարկումը քաղաքացիական դատավարությունում (գործնական հմտություններ).
5. Ներկայացուցչությունը աշխատանքային վեճերով.
6. Սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտի վեճեր. Բնակարանային և հողային վեճեր.
7. Ներկայացուցչությունը ամուսնաընտանեկան հարաբերություններից ծագող վեճերով.
8. Ներկայացուցչությունը գործարքների անվավերության և դրա հետևանքներին վերաբերող վեճերով.
9. Պարտավորական հարաբերություններից ծագած վեճերով գործնական առաջարկություններ.
10. Ներկայացուցչությունը դելիկտային պարտավորություններից ծագող վեճերով.
11. Ներկայացուցչությունը ժառանգական հարաբերություններում.
12. Փաստաբանական գրասենյակի կառավարման առանձնահատկությունները.
13. Իրավաբանական գրագրություն և վերլուծություն.

14. Իրավաբանական անձանց իրավական ուղեկցման գործնական հմտություններ.
15. Փաստաբանական գործունեության իրավական կարգավորումը և փաստաբանական էթիկա.
16. Ներկայացուցչությունը վարչական վարույթում.
17. Ներկայացուցչությունը վարչական դատավարությունում.
18. Խտրականության արգելքը.
19. Կատարողական վարույթի հիմնախնդիրները.
20. Ներկայացուցչությունը տրանսպորտային միջոցների շահագործումից բխող վարչական իրավախախտման վերաբերյալ գործերով.
21. Դատավորի և դատախազի էթիկա.
22. Հանրային իրազեկման հմտություններ: Հաղորդակցում.
23. Իրավական էլեկտրոնային ռեսուրսներ.
24. Ներկայացուցչությունը հարկային ոլորտի վեճերով.
25. Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմում ներկայացնելու գործնական առաջարկություններ.
26. Ներկայացուցչությունը սնանկության գործերով.
27. Անհատական դիմումի քննության վարույթը ՀՀ սահմանադրական դատարանում.
28. Ներկայացուցչությունը մտավոր սեփականության ոլորտի վեճերով.
29. Ներկայացուցչությունը արբիտրաժում, միջազգային արբիտրաժում:
Մեդիացիա:

Քրեաիրավական ուղղվածությամբ

30. Պաշտպանը մինչդատական վարույթում.
31. Պաշտպանի մասնակցությունը քննչական և այլ դատավարական գործողությունների կատարմանը.
32. Խափանման միջոց կալանք ընտրելու միջնորդության քննարկման ընթացակարգերը առաջին ատյանի դատարանում և դատական ակտի բողոքարկումը.
33. Քրեական գործերով ապացույցների ձեռքբերում: Ապացույցների անթույլատրելիությունը, վերաբերելիությունն ու հավաստիությունը.
34. Փորձաքննությունների կատարումը, դրանց տեսակները և փաստաբանի իրավասությունները փորձաքննություններ կատարելիս.
35. Փաստաբանի մասնակցությունը և մարտավարական հնարքները դատական քննության փուլում.
36. Հարցաքննության ձևերն ու առանձնահատկությունները.

- 37.Տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը քրեական դատավարությունում: Քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցչությունը.
- 38.Վերաքննիչ և վճռաբեկ բողոք կազմելու գործնական հմտություններ.
- 39. Արդար դատաքննությունը, ազատությունն ու անձնական անձեռնմխելիությունը ՄԻԵԿ լույսի ներքո.
- 40.Դատական որոշման կատարման հետ կապված հարցերի լուծման կարգը:
- 41. Դատական ակտերի վերանայումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով.
- 42. Դատավարության տարբեր մասնակիցների հարցաքննության հոգեբանական յուրահատկություններ, ազդեցություն գործելու սահմանները.
- 43.Արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներ.
- 44.Օպերատիվ հետախուզական գործունեություն, ապացույցներ.
- 45.Փաստաբանական գրասենյակի կառավարման առանձնահատկություններ.
- 46.Պաշտպանությունը կիրբերհանցագործությունների գործերով: Քննության արդի հիմնախնդիրները:

Մասնագիտական գործուսուցման (պրակտիկայի, **հաջորդ վեց ամսվա**) ընթացքում փաստաբանական դպրոցի ունկնդիրներն իրականացնում են՝

Քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության դեպքում՝

N	Գործողություն	Մեթոդ
1.	Փաստաբանական գրասենյակի գործունեության ուսումնասիրություն	Փաստաթղթաշրջանառության ուսումնասիրություն, հաճախորդներից հանձնարարությունների ընդունում, պայմանագրերի կազմում
2.	Պայմանագրերի կազմում	Տարբեր տեսակի քաղ. իրավական պայմանագրերի կազմում
3.	Խորհրդատվությունների իրականացում	Բանավոր և գրավոր խորհրդատվությունների տրամադրում
4.	Հայցադիմումի կազմում	Ավարտված կամ ընթացիկ քաղաքացիական գործերով հայցադիմումի կազմում, քննարկում ղեկավարի հետ
5.	Հայցադիմումի պատասխանի կազմում	Քաղաքացիական գործի ուսումնասիրություն, հայցադիմումի պատասխանի կազմում, քննարկում ղեկավարի հետ
6.	Վերաքննիչ բողոք քաղաքացիական գործով վճռի դեմ	Քաղաքացիական գործի ուսումնասիրություն, բողոքի կազմում, քննարկում ղեկավարի հետ
7.	Վերաքննիչ բողոքի պատասխանի կազմում	Քաղաքացիական գործի ուսումնասիրություն, բողոքի պատասխանի կազմում, քննարկում ղեկավարի հետ
8.	Վճռաբեկ բողոքի կազմում	Քաղաքացիական գործի ուսումնասիրություն, բողոքի կազմում, քննարկում ղեկավարի հետ

9.	Վճռաբեկ բողոքի պատասխանի կազմում	Քաղաքացիական գործի ուսումնասիրություն, բողոքի պատասխանի կազմում, քննարկում ղեկավարի հետ
10.	Հատուկ վարույթի գործերով դիմումների կազմում	Քաղաքացիական գործի ուսումնասիրություն, դիմումների կազմում, քննարկում ղեկավարի հետ
11.	Դատավարական փաստաթղթերի կազմում	Քաղաքացիական գործի ուսումնասիրություն, համապատասխան հարցումների, լիազորագրերի, միջնորդությունների կազմում
12.	Այցելություններ դատական նիստերին	Ղեկավարի հետ նիստերի մասնակցություն, համառոտագրի կազմում
13.	Վարչական վարույթ	Վարչական ակտի բողոքարկում

Քրեաիրավական ուղղվածության դեպքում

N	Գործողություն	Մեթոդ
1.	Փաստաբանական գրասենյակի գործունեության ուսումնասիրություն	Փաստաթղթաշրջանառության ուսումնասիրություն, հաճախորդներից հանձնարարությունների ընդունում, պայմանագրերի կազմում
2.	Կայանք ընտրելու միջնորդության առարկությունների կազմում: Խափանման միջոցի որոշման բողոքարկում	Առարկության, բողոքի կազմում, քննարկում
3.	Մինչդատական փուլում քննիչի, դատախազի որոշումների բողոքարկում	Ավարտված կամ ընթացիկ քրեական գործերով բողոքների կազմում, քննարկում ղեկավարի հետ
4.	Տուժողի շահերի պաշտպանություն: Քաղաքացիական հայցի կազմում	Ավարտված կամ ընթացիկ գործերի ուսումնասիրություն, տուժողի շահերի պաշտպանության նպատակով, գործողությունների հստակեցում, քաղաքացիական հայցի կազմում, քննարկում
5.	Միջնորդություններ նախաքննության ավարտի և դատարան ուղարկելուց հետո	Ուսումնասիրած քր. գործի շրջանակներում միջնորդությունների կազմում, քննարկում
6.	Վերաքննիչ բողոք քր. գործով դատավճռի դեմ	Քրեական գործի ուսումնասիրություն: Բողոքի կազմում, քննարկում
7.	Վճռաբեկ բողոք քր. գործով դատավճռի դեմ	Քրեական գործի ուսումնասիրություն: Բողոքի կազմում, քննարկում
8.	Փորձաքննություններ նշանակելու մասին միջնորդությունների կազմում, նախաքննության և դատաքննության փուլերում	Ավարտված քրեական գործի շրջանակներում ուսումնասիրել և կազմել միջնորդություն, քննարկել ղեկավարի հետ
9.	Այցելություններ դատական նիստերին	Ղեկավարի հետ նիստերի մասնակցություն, համառոտագրի կազմում

10.	Խորհրդատվությունների իրականացում	Բանավոր և գրավոր խորհրդատվությունների տրամադրում
-----	----------------------------------	--

Բացի այդ, Դպրոցի կազմում ստեղծվել է անվճար իրավաբանական ծառայությունների կլինիկա, որը 2015 թվականի նոյեմբերի 19-ից տրամադրում է անվճար իրավաբանական օգնություն՝ խորհրդատվություն, ՀՀ խոցելի խավին:

Իրավաբանական անվճար ծառայությունների մատուցումը իրականացվում է Կլինիկայի ներքին ռեսուրսներով՝ ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդիրների միջոցով, որոնք գործում են հանրային պաշտպանների և փաստաբանների մենթորության ներքո: Իրավաբանական օգնությունը ներառում է ոչ միայն բանավոր խորհրդատվությունը, այլև գրավոր խորհրդատվությունը՝ փաստաթղթերի կազմում, հետազոտություն :

Անվճար իրավաբանական ծառայությունները մատուցվում են Երևան քաղաքում և ՀՀ մարզերում՝ հատկապես հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում: Կլինիկայի միջոցով նշված ժամանակահատվածում շուրջ 400 անձի տրամադրվել է անվճար իրավաբանական օգնություն:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Ամփոփելով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը գտնում է, որ՝

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի՝ «բացառությամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի» դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահանջներին,

- «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահանջներին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

Աշխատանքային խումբ՝

Փաստաբաններ՝

Արա Զոհրաբյան

Լյուդվիկ Դավթյան

Արթուր Հովհաննիսյան

Սիմոն Բաբայան